ՀՌՈՄԵԱԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ XI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՀՌՈՄՈՒՄ

(2-23 հոկտեմբերի 2005 թ.)

Սույն թվականի հոկտեմբերի 2-ից 23-ը Հռոմում գումարվեց Հռոմեականթոլիկ Եկեղեցու եպիսկոպոսների XI համագումարը: Համագումարը, որին մասնակցում էին 256 եպիսկոպոսներ 118 երկրներից, կրում էր հետևյալ խորագիրը. «Հաղորդություն՝ Եկեղեցու կյանքի և առաքելության աղբյուրն ու գագաթնակետը»:

Համագումարի բացումը տեղի ունեցավ Ս. Պետրոսի տաճարում, Սուրբ Պատարագի արարողությամբ, որին նախագահում էր Հռոմի Բենեդիկտ ԺԶ Պապը: Համագումարի բացման առիթով մատուցված Ս. Պատարագի իր քարոզում Պապը նշեց. «Հաղորդության մասին կաթոլիկ վարդապետությունը՝ սահմանված Տրենտի ժողովի կողմից, պետք է ընդունել, ապրել և եկեղեցական համայնքին փոխանցել նորովի՝ ժամանակներին համահունչ: Առանց ընկալելու և ապրելու Հաղորդության խորհուրդը քրիստոնեական համայնքները կկորցնեն իրենց էությունը: Միայն հաղորդութենական լինելու շնորհիվ է, որ նրանք կարող են Քրիստոսին, և ոչ թե պարզապես գաղափարներ կամ արժեքներ՝ անկախ դրանց կարևորությունից, ներկայացնել մարդկանց»:

Հռոմի Սրբազան Քահանայապետն իր քարոզը եզրափակեց հույսի կոչով, քանի որ «Ասփված երբեք չի պարտվում. վերջում Նա հաղթանակում է՝ սերը հաղթանակում է»:

Հռոմեականթոլիկ Եկեղեցու Եպիսկոպոսների Սինոդը, որպես հաստատություն, ունի Եկեղեցու կառավարման հարցերում Պապին օգնելու առաջադրանք: Այն պաշտոնապես հիմնադրվել է 1965 թ. սեպտեմբերի 15-ին: Այն ունի մշտական գլխավոր քարտուղարություն՝ տեղակայված Հռոմում, որը ենթարկվում է անմիջապես և միայն Հռոմի Պապին:

Այս տարի համագումարի 20-օրյա աշխատանքների արդյունքում ներկայացվեցին բազմաթիվ զեկույցներ, որոնց վերաբերյալ առաջ քաշվեցին մի շարք հարցեր, որոնք ժողովականները քննարկեցին փոքրիկ աշխատանքային խմբերում:

Վերջում ժողովականները հանդես եկան «Հաղորդություն. կենդանի Հաց աշխարհի խաղաղության համար» խորագրված ուղերձով: Այն իրենից ներկայացնում է 26 պարագրաֆներից բաղկացած 17 էջանի մի տեքստ, որն, ի թիվս այլ խնդիրների, անդրադառնում է նաև այնպիսի հարցերի, ինչպիսիք են սովը, աղքատությունը, անարդարությունը, բնական աղետները, պատերազմները և դժվարին իրավիճակները Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում, Արևմուտքում տիրող կրոնական անտարբերությանը և այլն:

Համագումարին նաև հրավիրվել էին հոգևորականներ քույր Եկեղեցիներից: Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ այդ համագումարին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում էր Լիոնի շրջանում Հայրապետական Պատվիրակի փոխանորդ Գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյանը:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին